


h t n
✓ 8 5 2

1999 1 





ԾԻՍՈՒՄՆԵՐ *Handwritten signature*
Ե Ի

ՔԱՉԱՅԱՔԱՅԱՔԱՅ

ԵՂԻՆՅՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Ո Ի





547

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳՂԻԱԿԱՆԻ
ՅՈՎԱՆՆԵՍ Գ . ԿՐՂԻՅԵԸՆ

ՎԱՂՆՄԻ ԵՇՆԿԵՐՏ

Ա . ԱՅՅԱՅԱՅԱՅ

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՊԵՐՆԵՐ

ՆՈՅՆԵՆ ԵՂԻՆՅՈՒՆ

- 1853 -

4 852-60

28. 854

ՅԵՌԵՂԵԱՆ ԹԵՐԳՄԱՆԵՐԻՆ



Հատ անգամ՝ Ազգին հրապարակական
 թերթերէն մէկ քանին ծխախոտէն և ընչա-
 դեղէն յառաջ եկած մնասներուն վրայօք
 քիչ շատ լուր հաղորդած են Ազգայնոց՝ ա-
 նոնց մնասակար ազդեցութիւններէն զգու-
 շացնելով զիրենք , և քաջ գիտեմք թէ
 հասուցած չարիքները հազիւ թէ Ազգին մէկ
 փոքր մասին ուշադրութիւնը դրուած է ,
 ուստի մեր այս տեսրակին միմիայն նպատա-
 կը ազգասիրաբար արթնութիւն մը տալ է
 Մերազնեայց անոնց վտանգաւոր ըլլալուն
 վրայօք , խեղ մը հմուտ ու անուանի բը-
 ժիչկներու ըրած զննութիւններն ու փոր-
 ձառութիւնները պարունակող գրքոյկէ մը
 թարգմանելով , և բարեյոյս ենք , թէ մեր
 այս փոքր աշխատութիւնը անպտուղ չ'ել-
 լար , ու Ազգայինք իրենց ուշադրութիւնն
 ու հետաքրքրութիւնը չեն խնայեր այսպի-
 սի անձնօգուտ գրութենէ մը , զգուշու-
 թեան ընտրութիւնը իրենց թողով :

Օրհոստոսը՝ ունայնութեան մըն է , որ
 աշխարհիս մեծագոյն մասը իրեն պակ գերիւ ըրած է , ու
 ին զապասպարտէ մեղի վերինիս այն գերութեան շա-
 րայանն լաճին մեզ իօնելու , ուսկից բաժնուելը գը-
 րելիւ անհնար է :

ՔՈԼԼԷՍ :

ՆՈՒՆՈՒՄԻՆ ԵՒ ԸՆԶԵԴԵՂԻՆՆԵՐ

ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

11



ՄԱՐԴՈՒՍ աննահանջելի պարտաւորութիւնն է միշտ իւր անձին առողջութեան պահպանութեանը վրայ հսկելու . ու ամեն ջանք ընելու այս ազնիւ գանձը նիւթական գանձէն աւելի շատցնելու համար՝ որն որ կորսուելէն ետե անհրէշար է կրկին ձեռք բերելը . և որովհետե այս մեր մարմինը հողիններնուս պարտքը կատարող ու անոր գործը տեսնող մէկ հատիկ պաշտօնեան է աշխարհիս վրայ , հարկ է որ ամենայն ճգամբ արթուն կենանք այս պաշտօնին պակասութեան և ներքին գործարանացը խանգարման առիթ չ'տալու ամենեկին բնութեան համաձայն վարուելով , որն որ իւր գործը կարենայ լաւ կերպով կատարել . ու այս նպատակիս յաջողութեամբ հասնիլ ուղող մը պէտք է բնաւ բնութեան վրայ բնութիւն գործէ , բնութիւնը սածէս այն աւելորդ ու վնասակար սովորութիւնները կ'իմացուին , որ դժբաղդաբար անձին վը-

1 ՏՃ . Էնթէյէ :

րայ տիրապետելով անշուշտ յաղթող կը հանդիսանան , և կենաց ոսկի թելը կամաց կամաց կը մաշեցընեն ու կը կտրեն :

Ասանկ մահաբեր սովորութիւնները ընդհանրապէս մարդկային սեռին մէջ երբէք պակաս եղած չ'են , ու ամեն ատեն իրենց զոհերը դիւրութեամբ կը գրաւեն : Օխախտտին մնասակար սովորութիւնն ալ կրնանք ասոնց կարգը դասել , ինչու որ մեծ զարմանք կը բերէ մեզի թէ ասանկ դարչ ու թունաւոր խոտ մը , նաև դառն ու անհաճոյ հոտ ունեցող բան մը , և վերջապէս մէկ խօսքով թունաւորութենէն զատ աղէկ յատկութիւն մը չ'ունենալուն համար պիտի ըլլայ որ ընդհանուր մարդկային ընկերութեանց մէջ այսչափ ծաւալեր է . վաճառականութեան ընդարձակուելուն ալ մեծ առարկայ մը եղած է , և մշակութիւնը ամենահարկաւոր տունկերէ աւելի շուտով ամեն տեղ տարածուած է :

Ստուգիւ մարդուս սովորութիւններէն մէկուն վրայ այնչափ խորհրդածութիւններ չ'են եղած որչափ որ ծխախոտին և ընչադեղին վրայ կ'ըլլան : Արբոր մէկը ասոնց վարժուելու ըլլայ , անանկ սէր մը կը ցըցունէ , որ աւելի կ'ընտրէ քանի մը օր անօթի մնայ քան թէ ծխախոտ կամ քթախոտ չ'ունենայ , ու անկէ ետև շատ դժար է ասոնցմէ կտրուիլը , ինչու որ ձգելու ատեն շատ զգուշութիւն չ'ըլլուի կրնայ սոսկալի հետևանքներ ունենալ :

Տարածութեամբ գրեթէ հողագնտիս երեսը բռնած է . ամեն կարգէ մարդիկ իրեն տակն ունի — խիստ վայրենիէն ինչուան ամենէն իմաստուն մարդը — ու ամեն կլիմայի մէջ կը գրտնուի . Սիպէրիայէն ինչուան հասարակած , հասարակածէն ինչուան հարաւային ծայրերը :

Չարմանալին սա է , որ բազումատար շատ քիչ ժամանակի մէջ այսչափ տիեզերական սփիւռ ունեցաւ . ան ալ 250 կամ 300 տարուանց միջոցը :

Եւստիոտը տարեկան առնկ մըն է , Լամբրիկոյ մէջ կը բուսնի , և Յուլիս ու Օգոստոս ամսոց մէջ կը ծաղկի : Լամատը մեծ ու բազմաթեւ է . և ուղղակի դէպ 'ի վեր ցօղուն մը կուտայ չորս ոտքի չափ բարձրութեամբ , շրջանակաձև , քիչ մ'ալ խժային ու բազմաթիւ սրածայր տերևներով զարդարուած — որոնց ամենէն տակինը երկու ոտքի չափ բարձրութեամբ բաց կանաչ գոյն մը ունի : Կոկոնը զանգակաձև է , ու հինգ երկրաչափական ուղիղ հատուածներու ճեղքուած :

Եամանակաւ Լնդոլիոյ Լօրքշայր քաղաքէն շատ ծխախոտ կ'եղէր , բայց մշակութիւնը վաճառականութեան համար երկար ատեն արգիլուեցաւ , ու անկէց ետքը հոն և Լարոպայի ամեն կողմերը գլխաւորաբար Վիրգինիայէն կը բերէին , ուր այս տունկս խիստ առատ կը մշակուի : ()

գոստոս ամսուն մէջ կը հնձեն ու կը կախեն որ չորնայ . ետքը ծրարներով կամ տակառներով ու ըրիշ երկիրներ կը խրկեն , ուր ըստ գործածութեան զանազան կերպերով կը շինեն ու կը ծախեն :

Այս տունկս նախ Սպանիացիք գտան Առաքաթանի մէջ 1520ին ատենները , անկէց ետքը Արևմտեան — Հնդկաստան և Հիւսիսային — Ամերիկայ խրկուեցան : Առաջ Աւրոպա մտցընողը եղաւ Հէրմանտէզ տը (Թօլէտօ անուն Սպանիացի ազնուականը 1559ին ժամանակները , Սպանիոյ և Փորթուկալի երկիրները քիչ մը բան բերելով : Այս տունկիս սերմերը Վիսպոնայէն Յոլհաննէս Սիլբօթ Վաղղիոյ զեսպանին ձեռօքը փարիզ կատարինէ (Թագուհւոյն ընծայ խրկուեցաւ , որ ասոր փոշին կը գործածէր , և այս առթով քթախոտին առաջին հնարողը կրնայ կարծուիլ :

Հէրիլթ կ'ըսէ թէ Անգղիացի գաղթականները քանի որ Վիրգինիոյ մէջն էին չէին գործածեր , բայց 1586ին երբոր իրենց հայրենիքը վերագարձան տեղացւոց սովորութեան համեմատ սկսան խմել : Բայէյ և ուրիշ քանի մը ազնուական երիտասարդներ առաջին անգամ Անգղիոյ մէջ գործածողները եղան՝ ու այս սովորութիւնը այնչափ շուտով Անգղիացւոց մէջ տարածուեցաւ , ինչպէս որ նոյնը Փորթուկալ , Սպանիա և Վաղղիա եղաւ : — Մաքրով կ'ըսէ « որ Սըր Ուօլթր Բալէյ իւր տանը դուռը նստած Սըր Հըֆ

Միտտլթունին հետ ծուխ կը քաշէր, Աշիսարէթ
 Թագուհւոյն Թագաւորութեան ատենը, և հաւա-
 նականաբար այս սովորութիւնը իւր մասնաւորու-
 թենէն, ու մանաւանդ այն մարդոցը ազնուու-
 թենէն էր որ այնչափ տարածեցաւ. — ընդհան-
 րաբար այսպիսի առիթներն են որ միշտ պատճառ
 կ'ըլլան ո՛ր և իցէ մնասակար ու պժգալի սովոր-
 ութեան մը հաստատուելուն »: Ամերիկան գրտ-
 նուած ատենը Հնդկաստանցիք շատ կը գործա-
 ծէին այս խոտս, և գրեթէ ամեն ցեղի մէջ ալ
 խմող կար, ու անանկ կարծիք մը կար մէջեր-
 նին որ, իբրև թէ այս խոտիս գործադրութեամբը
 շատ ախտեր կը բուժէին: Հնդկաց այս տունկիս
 վրայ ունեցած վէրքեր և ախտեր բժշկելու սնո-
 տի գաղափարը և մանաւանդ զարմանքը պատճառ
 եղաւ ուրիշ ազգերը իրենց սովորութեանը հրա-
 պուրելու:

Սոր Աւրոպա մտած ատենը գործադիրները
 ամեն տեղ ծաղր ու հալածանք կը կրէին: Յա-
 կորոս առաջին Թագաւորը որ միշտ իւր հպատա-
 կացը բարոյականը ուղղելու կը փափաքէր, հրո-
 վարտակներ հանեց անոր գործածութիւնը արգի-
 լելու համար, որ ատեն այլևայլ լեզուաւ հարիւ-
 բաւոր գրուածքներ ու հրատարակութիւններ ալ
 աշխարհիս շատ կողմերը տարածուեցան անոր դէմ:
 Տրպան ութերորդ Պապը խմողները բանադրեց,
 բայց ընդ հակառակը այնչափ աւելի շատցան, որ

ինչուան եկեղեցւոյ մէջ անգամ սկսան ծխել առանց իւր խօսքին մտիկ դնելու . ու Եղիսաբէթ կայսրուհին ալ եկեղեցւոյ մէջ խմելը արգիլեց :

Թարանսիլուանիայի մէջ 1689ին հրովարտակ մը ելաւ ծխախոտ մշակողները սպառնալով որ՝ թէ որ ցանելու ըլլան իրենց երկիրները յարքունիս պիտի գրաւին : Մօսքուայի՝ մեծ Պուքսը ու Պարսից թագաւորը ծուխ քաշելը արգիլելով՝ խմողներուն կամ քիթը կը կտրէին և կամ կը մեռցընէին : Կ . Պօլսոյ մէջ՝ որ հիմա ընդհանուր կը գործածուի , տասնըութերորդ դարուն այս սովորութիւնը խիստ ծաղրական ու զզուելի կը սեպուէր . թէ որ խմող մը տեսնէին , անմիջապէս ծխաքարը քիթը խօթելով՝ փողոցները կը պտըտցընէին , ու հասարակութեան առաջը ծանակ կ'ընէին զինքը : Գլխաւոր հակառակորդներն էին շէխերը , բժիշկները ու կառավարութեան երեւելի Պաշտօնատարները . իսկ առջինները խմելը մեղք կը սեպէին :

Չորրորդ Սուլթան Սուրատ՝ ծխախոտ քաշելը մահապարտութեան յանցանաց կարգը դասեց երկրին անարդատաւորութիւն պատճառելուն համար : Էելուետիոյ (Օուլցցերի) քանի մը կողմերն ալ ընդհանուր հալածման առիթ եղաւ . Պէոն նահանգին հասարակաց կանոնադիրները 1661ին ծխախոտին արգելքը տասնաբանեայ պատուիրանաց կարգը անցուցին , անմիջապէս եօթներորդին տակը :

Ընդհանրապէս կը կարծուի թէ Աւրոպացւոց գործածած խօսուիտ բառը՝ որ ծխախոտ կը նշանակէ , լատիներէն երկրէն բերուելուն համար իրեն անունն ալ անկէց առնուած ըլլայ . բայց հիմա այս կարծիքը անհիմն է : Հըմպոլթ կը հաստատէ թէ լատիներէն հիմնական լեզուաւ բառ մըն է որ ծխաքարչ կը նշանակէ , Սպանիացիք նոյն բառը ծխաքարչէն ծխախոտին փոխանակելով՝ միւս ազգերն ալ անոնցմէ առած անանկ կը գործածեն :

Չխախոտը զօրաւոր , թմրեցընող և խիստ գրգռիչ է . թէ որ ուտուելու ըլլայ կը փսխեցընէ ու փորհարուծիւն¹ կը պատճառէ : Ընոր ու գելից իւրը սաստիկ զօրաւոր է . թէ որ վէրքի մը վրայ քիչ մը դրուելու ըլլայ իժի թոյնի պէս մահաբեր կ'ըլլայ : Ափած ջուրը , փոշին ու ծուխը մշակուած պարտեզներուն ճճիւնները ջնջելու կը գործածեն , ոչխարաց դեղմին² մէջ եղած ժժմակներն ալ ջնջելու կուգայ :

Չխախոտին ազդեցութիւնները սա հետեւեալներն՝ որ Սաթէրիա Մէտիքա անուն անուանի գրքէն քաղուած է . — նոր փրցուած տերևներ շատ քիչ հոտ ու համ ունին , բայց չորնալէն ետև հոտերնին կը սաստկանայ ու թմրեցու-

¹ Տճ. իսկալ :

² Տճ. ետիպալ :

ցիչ կ'ըլլան . համերնին դառն և շատ կծու է :
 Թե որ երուի կայծ ու քարշահոտ ծուխ մը կ'ել-
 լէ , թորուելու ըլլայ կանաչ գունով ոգեղէն իւղ
 մը դուրս կուտայ , որուն վրայ բժշկական զօրու-
 թիւնները յայտնի կ'երևան այս բժշկական զօ-
 րութիւնները նոյն գրքին համեմատ թմրեցընող ,
 հանդարտեցընող , փսխեցուցիչ , միզողական , մաք-
 րողական , և փունգացուցիչ են թէ ներսէն և թէ
 դրսէն գործածուի : Սաստիկ գլխացաւ , սրտի
 խառնուք , տկարութիւն , պաղ քրտինք ու եր-
 բեմն ինչուան մկանանց սաստիկ շարժում ալ կը
 պատճառեն : Օխախտութիւնը կամ ծամելու
 ատեն պատճառած թմրեցընող զօրութենէն զըտ-
 նուած է թէ ահուայի ցաւը կը մեղմացընէ . փոր-
 ձով ջղային շնչարգելութեան ալ օգտակար կը
 սեպուի : Քսխեցուցիչ դեղի տեղ շատ չի տրուիր ,
 ինչու որ խմուելէն ետեւ շատ գէշ հետեանքներ
 կրնայ ունենալ : Օխախտութիւնը քթախոտին բոլոր
 տեսակներուն հիմն է . փոշի եղած տերեւները եր-
 բոր քթախոտի ավանրժ մէկը քիթը քաշելու ըլ-
 լայ սաստիկ կը փունգտայ , ու քիթը կը պարպուի :

Թե որ շատ գործածուելու ըլլայ տեսութիւնը
 կը բթացընէ , քնափութիւն կը պատճառէ ու
 կաթուածի ալ ենթակայ կ'ընէ խմողը : Գործա-
 ծութիւնը սովորական ըլլալէն ետեւ անկարելի է
 առանց մեծ վնասու անկէց կտրուիլը , ինչպէս որ
 Վրլէն բժիշկը իր բուն փորձառութենէն իմա-

ցաւ : Այս հմուտ բժիշկին կարծեացը համեմատ ծխախոտը՝ ինչ կերպով որ ըլլայ մարդուս երբէք օգուտ չի կրնար ընծայել :

Մաքնիշ կ'ըսէ թէ, «Օխախոտին ոգեղէն իւրը անանկ սաստիկ զօրաւոր է, որ երկու կամ երեք կաթիլ թէ որ նոր բացուած վէրքի մը վրայ լեցուի անշուշտ մահ կը պատճառէ » : Տօբթըր Պարօու իւր ճանապարհորդութեան գրքին մէջ շոթենթացիի մը վրայ այսպէս կը խօսի. «Շոթենթացի մը իւր փայտէ ծխաքարչին ծայրովը այս իւղէս քիչ մը օձի մը բերանը լեցուց լեզուն դուրս հանելու ատենը, ասոր զօրութենէն օձը վայրկենական ելեքարական ցնցմամբ կէս մը ու լորուածքէն քակուելով մէկէն անշարժ մնաց գետինը, մկանունքը այնպէս քաշուեցան՝ որ կենդանին արևուն մէջ չորցած ապուխտ դարձաւ » :

Փիլիսոփայական գործողութիւններէն յայտնի է թէ ծխախոտին ազդեցութիւնը թոյնի պէս ժանտ է. ինչպէս որ զօրաւոր ջրէն ունկի մը շան մը երակին մէջ դրուելով՝ քիչ ժամանակէն սոսկալի ցնցմամբ սատկեցուց : Տ. Ատամ Վլարք «Օխախոտին գէշ հանգամանքներն ու չարաչար գործածութիւնը » անուն յօրինած ճառին մէջ կ'ըսէ թէ այս խոտիս քիմիքական իւղին մէկ կաթիլը կատուի մը լեզուին վրայ դրուելով սաստիկ շարժում մը պատճառեց, ու վայրկենական մահուամբ մեռուց :

“Օտուխ քաշելուն առաջին հետեանքը” կը սէ՞, Տ. Սիկմանտ իւր Լանսէթ գրքին մէջ, “ընդհանրաբար բազկերակին սաստկութիւնն է, ուսկից ետքը սիրտ խառնուք ու յոգնածութիւն կուգայ. երբեմն ալ մարելիք ու ննջելու փափաք մը, անկէց ետքը բազկերակներն ալ թէ զօրութենէ և թէ լիութենէ կը տկարանան: Աոր—Անդղիոյ Ուոթրհաուս բժիշկը քանի մը օրինակներ առած է տղայոց գլանիկ որ է սկար խմելէն ծագած վնասներուն վրայ, որոնց մէկը հոս կը դընենք. “Սաղէմի մէջ Պ. Յակոբոս Պէրրին 12 տարեկան մեռաւ, որուն մահուան պատճառը անշուշտ չարաչար սկար քաշելն էր”: Չափէ դուրս սկար խմելէն պատահած երկու մահ ալ Պ. կէմէլին կը պատմէ, որոնց առջինը մէկ նիստին մէջ 17 սկար կամ ծխաքարչ և միւսը 19 սկար կը քաշեն եղեր:

Օխտախտին մէկ մեծ վնասն ալ սա է որ լորձունքը¹ կ'ապականէ ու կը փճացընէ, այսպէսով մարսողութիւնը, ախորժակը ու բերնին մասնները վնաս կը կրեն, վասն զի լորձունքը կը դառնանայ և շունջը կ'ըսկսի հոտիլ. ախուաները կը գեղնին ու կը սենան. թէ որ ամեն մէկ ծխելէն ետեւ բերանը չ'ըլացուի՝ լինտերը կ'ախտաւորին, ատամունքը փտտել կ'ըսկսին, աչքերը շատ անգամ տեսութիւննին կը կորսնցունեն. թէ որ չա-

¹ Շողեւ, ՏՃ. սակայ :

փէ դուրս ըլլայ գործածութիւնը՝ մտաց կարողութիւնն անգամ շատ հեղ խիստ կը վնասի : Ախհար մաղձոտ և հիւժական ակտ ունեցող անձանց յայտնի վնասակար է ծխախոտը, որ շատ անգամ ոգեղեն ըմպելիքներու կ'առաջնորդէ զիրենք, անբնական ծարաւութիւն մը կուտայ, ու երբեմն ալ բոլոր մարմնոյ խորին թմրութիւն կը պատճառէ : Չափէ դուրս ծուխ քաշելը մարդուս ոչ անձնական հաճութիւն մը կ'ընծայէ և ոչ ալ զուարթութիւն մը առանց ներքին գործարաններուն պաշտօնները սաստիկ վնասելու :

Ուրիշ մատենագիր մը Վեննի Սիբլօփէտիա գրքին մէջ սա հետեւեալ զննութիւնը կ'ընէ որ Սիկմօնտ բժշկին զննութեանցը վճռողական ապացոյց մըն է :

« Ախախոտը թմրեցընող թոյն մը պէտք է համարուի, որ մարմինը անոր գրգռող զօրութենէն ո՛ր և իցէ կերպով չի կրնար ազատ մնալ. թէ և անկէ ծագած վնասները միշտ մեզի յայտնի չեն երևար, բայց գաղտնի ըրած չարիքները անշուշտ են » :

Սէկ զօրաւոր փաստ մը կայ, թէ ծխախոտը ժանտամահը և ուրիշ փոխադրական հիւանդութիւնները արգիլելու օգտակար է. բայց Ռուսէլ բժշկին դիտողութիւններուն նայելով՝ Ռէրիայի (Նալէպ) մէջ ծուխ քաշողները միւս մարդկանց պէս ժանտամահին որս ըլլալու ենթակայ են :

Անշունչ արարածներէն անգամ ծխախոտին թունաւոր յատկութիւնները կրնանք հաստատել, ինչու որ անասնոց՝ թռչնոց և սողնոց բազմաթիւ տեսակներէն մէկը տեսնուած չէ որ այս մահաբեր խոտս ուտէ : Միայն այս վնասակար տունկիս գործածութիւնը մարդուս յատկացեալ է : Սարդիկ ամեն բան կ'ուտեն՝ ու ամեն բան իրենց ակորժակին օգտակար կը սեպեն :

Անգղիարէն լեզուաւ ընտանեկան Վիմիագործ անուն օգտակար գրքոյկէն՝ որ ծխախոտին թոյնին և հետը խառնուածներուն վրայօք կը խօսի, կ'երևայ թէ ընչադեղը փոշիացեալ ծխախոտին ստորին տեսակներէն կը շինուի. շատ հեղալ անհոտ բուսականներու փոշիէն, ինչպէս, քլորախոտ ծախող խանութներուն աւելածներէն, փոշի եղած ընկուզի կեղևներէն, և հին ու փրտած փայտերու փոշիէն :

Գոյնը՝ սև կամ թխագոյն ներկով կամ խահուէի դիրտով¹ կուտան, զգացողութիւնը թիւրակէսով² և մէղով կը չափաւորեն, վերջինը անոր ամմոնիային համար կը դնեն, ու ասանկով քլորախոտը կը սաստկանայ, նաև ապակիի նուրբ փոշի, հասարակ աղ և ամմոնիայի ու շաքարի եփած աղ ջուր ալ կը դնեն այն ամբաւ խառնուրդին մէջ, որոնց առջինը զօրութիւնը աւելցնեն.

¹ ՏՃ. Բէլֆէ :

² ՏՃ. Բէլէաֆ :

լու , ու երկրորդը քանակը շատցընելու համար է : Սխախտող բորակային թթուով ու տեսակ աղով¹ կը խառնեն դիւրաւ վառելու համար : Կապար , պղինձ , անթիմոն , ծծմբային թթուուտ , պաղլեղ , քլորին , և կծու զտեալ սնդիկ — որ իրաւցընէ մահաբեր թոյն մըն է — , շաքար , սև եղբորոս² կամ քիմիա ծառին չոր տերևները նաև ծխախոտին հետ կը խառնեն : Թէ որ խիստ անուշահոտ է նէ քիմիա ծառին կեղևը , յամպար³ , մուշկ⁴ և ուրիշ հոտաւոր դեղորայք դրուած են մէջը : Խառնուած ծխախոտին ծուխը շատ վնասակար է կ'ըսէ թոքին⁵ յիշեալ գրքոյկը :

Շատ երկար ատեն է որ Լօնտրայի լրագիրները իմացուցին թէ փկաբ շինող մը կաղամբի չորցած տերևները ծխախոտին զօրաւոր ջրոյն մէջ թանալով փկաբ կը շինէ եղեր :

Լսելի զարմանալին սա է որ , տասնըմէկ կամ տասներկու տարի առաջ Շէֆֆիլտի մէջ մէկը տեսնուեցաւ որ իր ծխախոտը ձիու չոր աղբի հետ խառնելով՝ իբր լաւագոյն տեսակ կը ծախէ եղեր : Լմեն ատեն և ինչուան այս օրս մի և նոյն եղանակը 'ի գործ կը դրուի :

1 Լս. աղբ բոստանաց փոխերէն կը հանուի :

2 ՏՃ . պոպոնուղ օրնա :

3 ՏՃ . ամպար :

4 ՏՃ . միս :

5 ՏՃ . ար ձեյեր :

Լինգլիոյ Գէորգ առաջնոյն թագաւորութեան
 ատենի լօրտերուն ժողովոյն մէկ օրէնքէն կ'երևայ
 թէ ծխախոտին մէջ խոտ և ուրիշ նիւթեր խառ-
 նողները վեց ամիս կը բանտարկուէին . Գէորգ
 երրորդին մէկ օրէնքէն ալ կ'իմանանք թէ ընկու-
 ղի, հօփի, ժանտաթղենիի և ուրիշ ծխախոտի նը-
 մանութիւն 'ունեցող ծառերու տերւէները գոր-
 ծածողները 200 լէրս «ֆէլդ» տոյժ կը կրէին . և
 տասներկու տարիի չափ առաջ հաստատուած օ-
 րէնքէ մ'ալ կ'երևայ թէ ծխախոտի վաճառական
 մը երբոր իւր գործատանը մէջ՝ չամանի կամ գա-
 րիի արմատ, խորոված ցորեն, եղերդ¹, կիր,
 աւաղ, փտտած փայտի փոշի, թխագոյն կաւ,
 ստուերաներկ, ծովու սէզ, մամուռ, և ո՛ր և իցէ
 չոր տերև կամ խոտ ծխախոտին կամ քթախո-
 տին մէջ խառնելու կամ անոնց քանակը աւել-
 ցընելու համար դրած ըլլայ նոյնը 200 լէրս ըս-
 ֆէլդ» տուգանք տալու պիտի պատժուի :

Թէ որ որքիւնը² ըննացընելու համար ծխա-
 խոտին իւղը գործածուի խիստ գէշ հետեանքներ
 կ'ունենայ :

Սանթէօյլ Գաղղիացի հռչակաւոր բանաս-
 տեղծը՝ Սպանիոյ քթախոտ դրուած գաւաթով
 մը չ'գիտնալով գինի խմելով իւր կեանքը կորսըն-
 ցուց : Պ . Լ. սթըլի Վ. ուփըր , Պ . Չարլըս Պէլ ,

¹ ՏՃ . հինդիպոս :

² ՏՃ . Բէյբէյ :

Ֆրուլլեր, Փարիզ ու Համպուրկի կրալ բժիշկն ամենքն ալ ծխախոտին բժշկապէս գործածութենէն յառաջ եկած սոսկալի ու մահաբեր վնասները կը պատմեն . և Սիկմօնտ բժիշկը կը խրատէ որ ամենայն զգուշութիւն ըլլուի դեղի տեղ դրուելու ատեն :

Օխախոտը մարդուս անձին վնաս տալէն 'ի զատ ստացուածքն ալ շատ անգամ ափ մը մոխիր կը դարձընէ . «իկար կամ ծխաքարչ խմողներուն անհոգութենէն շատ հեղ յարդի շտեմարաններ, տներ, խանութներ, սայլեր, և կառքեր այրած են : Հիմա Աւրոպայ երկաթուղիներուն վրայ ծուխ քաշելը անաչառապէս արգիլուած է, ու ղեւորաց ապահովութեանը համար :

Մաքնիշ կ'ըսէ «Օխախոտին ազդեցութիւնը ոգեղէն ըմպելիքներու ազդեցութենէն բաւական տարբեր է, բաղկերակները սաստկացընելու տեղ կը տկարացընէ . ու երբոր չարաչար խմուելու ըլլայ թուլութիւն, դլխու պտոյտ, գաղափարի խանգարումն, ստամոքսին սաստիկ ցաւ, փսխել, դող, և ինչուան մահ կը պատճառէ : Իսկ թէ որ չափաւոր ըլլայ գործածութիւնը մեղմ ազդուութիւն մը կ'ուտայ մտքին, անխռով զուարճութիւն կ'ընծայէ անձին . և բոլոր կրքերը կը կակղեցընէ ու կը մեղմէ : (Սէլ, քթախոտը ժամանակաւոր ու չափաւոր գործածուի մեծ վնաս մը չ'ըներ, բայց չափը անցնելուն պէս ստուգիւ

վտանգ կը սպառնայ : Վրթին մէջի պատած նուրբ
 թաղանթը կը թանձրանայ , հոտառու ջղերը կը
 տկարանան , որով հոտառութեան զգացողութիւ-
 նը կը փթանայ : Մսկէց 'ի զատ , երբ փոշին զօ-
 րաւոր շնչառութեամբ վեր քաշուի՝ ստոյգ է թէ
 ստամոքսին մէջ ալ կ'երթայ , ուստի այս գլխա-
 ւոր գործարանը այն գրգռիչ գեղին ենթակայ ե-
 ղածին պէս ոչ միայն թմրութիւն կ'ուտայ , այլ
 նաև սրտի ցաւ կը պատճառէ , և մարսողութիւնն
 ալ կը դժուարացնէ : Ընդհանրապէս կը հա-
 ւատանք թէ Սեծն 'Վափօլէոն' չափէ դուրս քը-
 թախոտ խմելէն յառաջ եկած ստամոքսին ախ-
 տաւորութենէն իւր մահը ընդունեց : Վրթախոտը
 նաև զօրաւոր հակամիտութիւն մը ունի մարդուս
 արիւնը դէպ 'ի գլուխ ուղղելու , ասոր համար
 յորդ արեան տէր եղող անձինքը պէտք է այս
 սովորութենէն զգուշանան : Ընչադեղը՝ (ըստ
 կարծեաց ոմանց) թէ որ պժգալի սովորութիւն
 մը չէ , միայն քթէն պարպուած սև ու զգուելի
 հեղուկը , քթին ուռեցքն ու կարմրութիւնը՝ ու-
 թիշ անհաճոյ պարագաներովը մէկ տեղ , երանի՛
 թէ բաւական ըլլային մարդիկները խմելէն ետ
 կեցընելու : Բաղդատութեամբ ծուխ քաշողը քը-
 թախոտ քաշողէն երջանիկ է : Մնոր դէմքին վը-
 րայ մասնաւոր հաճութեան նշոյլներ կը պարեն .
 և ծուխին վէտ առ վէտ վեր ելած ատենը՝ կ'ե-
 րևայ թէ զուարճալի ու երջանիկ օդի մը մէջ է

նստած : Մարդուս ժամանակաւոր զուարճութիւն
 մը ընծայելուն համար թէ որ ուղենք արդարա-
 ցընել կամ պաշտպանել նէ՛ անկարելի է , ինչու
 որ շունչը կ'ապականէ , ակոսյները կը սեցընէ ,
 մարսողութեան համար պէտք եղած լորձունքը կը
 նուազեցընէ , ուղեղին նուրբ ջղերը , ախորժակը և
 մարմնոյն կազմուածքը կը վնասէ : Անմարսողու-
 թիւն և ստամոքսին մէջ ուրիշ անկանոնութիւն-
 ներ կը պատճառէ , ու յաղթանդամ մարդիկն
 ալ կաթուածի կ'առաջնորդէ : Հիմակուան ժա-
 մանակս «կէր» քաշելը երիտասարդներուն մեծ նո-
 րասիրութիւն մը կը համարուի , որոնք շատ ա-
 տեն բերաննին «կէր» փողոցները ժուռ կուգան ,
 իրենց հասակնուն մէկ կատարելութիւնը համա-
 րելով : Օխախոտը գործածելու խիստ վնասա-
 կար մէկ եղանակն ալ ծամելն է , որ լորձունքը
 կը փճացընէ , ասանկով մարսեցուցիչ գործա-
 րանները կը խանգարին ու մեծ վնաս կը կրեն :
 Սիշտ ծխախոտ ծամողները սովորականէն աւելի
 դժուարամարսութեան և սեւամաղձութեան են-
 թակայ են , ու անոնցմէ շատերը իրենց անխո-
 հեմութենէն յառաջ եկած լերդի ցաւովը կը տան-
 ջուին : Խիստ անվնաս և միանգամայն խիստ զգուե-
 լի կերպ մ'ալ կայ ծխախոտ գործածելու , այս
 ալ քիթը թխելն է , ասոր ալ վարժողները փոք-
 րիկ դնտեր շինած ուռնգերնին կը խօթեն , և ու-
 զածնուն չափ հոն կը թողուն » :

Իտրերաղդարար այս երկու սովորութիւնները այսինքն ծամելը ու թխելը որչափ որ վնասակար ու զգուելի են նէ այնչափ ալ խմողները շատ քիչ են, և բարեյոյս եմք թէ մեր Ազգին մէջ գրեթէ գործածող չ'կայ :

Աւրոպիոյ հրապարակական թերթերէն շատերը շատ անգամ ծխախոտին և սիգարէն վնասակար յատկութիւններուն վրայ խօսած են և կը խօսին : Այս պէտքով ու վտանգաւոր սովորութիւնը Վերմանիոյ մէջ տարածուելուն վրայօք Համպուրկ հրատարակուած օրագրէ մը սա հետեւեալ դիտողութիւնները կ'ընենք : «Օխախտաւ՝ Վերմանացւոց թոքացաւի ունեցած հակամիտութեանցը խիստ ազդու պատճառներէն մէկն է կ'ըսեն, բժիշկները : Անոր համար եղած ծախքը խիստ շատ է . Համպուրկի մէջ միայն 50,000 տուփ սիգար ծախս եղած է, իւրաքանչիւր տուփին արժէքը 3 լրա սիգարին ըլլալով, որ ընդ ամենը 150,000 կ'ընէ, ասոնց ամենքն ալ ծուխին հետ հովացած են : Ասե պէտք է գիտնալ թէ ասիկայ եղած ծախքին մէկ մասն է : Սիգարը բարձրագոյն տատիճանի երիտասարդաց դասուն շրթունքին զարդն է . ընդհանրապէս տարիքը առած մարդիկները այս զարդը չ'ընդունելով՝ իրենց նախնեացը համեմատ խոշոր սրտեր կը խմեն : Այս ժանտամահը՝ Ազգիպտական գորտերու ժանտամահին պէս ամեն տեղ ու ամեն բանի մէջ կը տեսնուի . սրճա-

նոցները , Ժողովարանները , տան կահկարասիները , հանդերձները դէշ կը հոտեցընէ , ու ինչուան մարդիկները : Մեր բուն շնչած օդը՝ այս թոյնը թոքը առաջնորդող առիթ մըն է , որով ամեն մարդ՝ այր , կին և տղայ խաշած վառեակի գոյն կ'ունենան : Ըրթնցած ատեննէն ինչուան պառկելու բոպէին ծխաքարը ձեռքերնէն պակաս չէ . տասնէն ինը գրեթէ ամենեին չեն քնանար . մէկ զօրաւոր ծուխ մը կը թագաւորէ ամեն տեղ , ու հազարաւոր մղոններու մէջ եղած մարդիկը չոր մուխ կը դարձընէ : Բայց թէ որ մարդուս կեանքը կարճեցընելու կամ մտաց կարողութիւնը ըսպառելու մեծ փնաս մըն է , Գերմանացւոց երևելի բնաբաններն ու բժիշկները թէ՛ ծխախոտ և թէ՛ քթախոտ քաշելը սաստիկ կ'արգիլեն . ու կը հաշուեն թէ 18 տարեկանէն ինչուան 35 տարեկան մարդոց պատահած 20 մահուան 10ին պատճառը չարաչար ծուխ քաշելն է : Ըչաց ընդհանուր տկարութիւնը՝ որ զՎերմանացիները ազնուաբար ակնոցաւոր ազգ կոչել կ'ուտայ , ջղային թուլութեան պատճառաւն է : Ծխախոտը մարդուս արիւնը , աչքերը և ուղեղը կ'այրէ , մարմինը մուսկայ կը դարձընէ , և մտքին բնական տրամադրութիւնը կը խանգարէ » :

Ծխախոտը ընդհանուր գործածութիւն մը ըլլալուն վըայօք յաջորդ յօդուածը կը հրատարակէ Ներոպիոյ օրագիրներէն մէկը :

« Գաղղիոյ , Ենգղիոյ , Սպանիոյ , Գերմանիոյ , Հելլենտիոյ , Հոլանտայի , Տանիմարքայի և Ռուսիոյ մէջ հարուստը , աղքատը , գիտնականը ու տգէտը առ հասարակ ծուխ կը քաշեն : Միացեալ Մահանգաց մէջ շատ անգամ չափազանց կը դործածուի , առտուընէ ինչուան երեկոյ տղայոց բերանը «կէտ» կամ ծխաքարչ տեսնելը զարմանալի բան մը չէ : Եմբրիկոյ օրագիրները շատ հեղ աղայոց մահը չափէ դուրս խմելէ պատճառած կը կարծեն : (Թէ որ արեւմուտքէն արեւելք երթալու ըլլանք հոն ալ այս սովորութիւնը ամեն ազգաց մէջ պիտի տեսնենք : Տաճկաստանի մէջ ծխաքարչը ամենուն բերանն է , և երեւելի խօսակցութիւններն ու բարեկամական տեսութիւնները ծխաքարչով մը կը վերջանան : Հնդկաստանի մէջ՝ ոչ միայն երիկ մարդիկները , հապա կանայք ալ կը խմեն : Չինաստանի մէջ ալ շատ խմող կայ » :

Եւ ամեն տեղ զանազան կերպ ու զանազան նիւթէ ծխաքարչ կը բանեցընեն , ինչպէս Երաբացիք , Տաճիկները , Հայերը , Յոյները ևայն շատ , Պարսիկ և Հնդիկք հոստահ , Գերմանացիք Ֆրանսիոյ , Ենգղիացիք ու Հոլանտացիք տեսակ մը կաւէ շինուած փոքր ծխաքարչ , իսկ Սպանիա , Իտալիա և Եմբրիկոյ ամեն կողմերը ծխաքարչը դրեթէ բոլորովին վերցած «կէտ» կը քաշեն :

Սժտերս Ենգղիա հրատարակուած լրագիր մը

ասանկ կը գրէ :

“ Հիմակուան երիտասարդները մարդկութեան հասակը երթալու ատեննին՝ «կարճ իրենց ամենահարկաւոր բան մը կը սեպեն . և իբրև թէ անանկ նշան մը՝ որ աշխարհս իրենց մարդ ըլլալը անով պիտի կրնայ իմանալ . և չ'ըլլայ որ խմելնին միայն իրենց տանը մէջ եղողները գիտնան , անոր համար բերաննին «կարճ» փողոցները կը պտըտին : Այս սովորութիւնը ռամկական ըլլալուն հիմա աղնուականները փողոցներուն մէջ «կարճ» չեն խմեր , միայն ստորին խանութպաններու և ծառայից յատկացեալ է :

“ Օխախտը ” կ'ըսէ Պ . Յովհաննէս Զօքինս , “ Աղիսաբէթ թագուհւոյն և Ն . յաջորդներուն ժամանակը ունայնասիրութիւն համարուած էր ” : Պէն Ղօնսըն որ ծուխ քաշելը մահու չափ կ'ատէր , խմողներուն դէմ բաղմամբիւհենդնութիւններ ըրած է , որոնց բոլորն ալ Ռիտանիոյ Սողոմոն Յակոբոս առաջնոյն գրածներուն հետ բաղդատելու ըլլանք բան մը ըսել չեն . որն որ իւր վեհափառութեան ներքեւը եղած ժողովրդոց առողջութեանը համար չ'ուզեց իւր գրիչը խնայել : 1603ին — Վնսս թիւսիսի — անուն յորինած երևելի գիրքը 'ի լյս ընծայեց , որուն մէջ յառաջիկայ յօդուածները նշանաւոր են : — Վ'ըսէ , “ Օխախտը ” աչքի նեղութիւն տուող , քրթի անհաճոյ , ուղեղին և թոքին վնասակար է ,

ու անկէ վէտ առ վէտ ելած սև ծուխը տարտա-
 րոսին անյատակ փոսոյն մէջէն եղած ծխին քիչ
 մը կը նմանի » : Աւ աւելի խորին զննելով կ'ըսէ .
 « ծխախոտը՝ դժոխքին ճիշդ կենդանի նմանութիւ-
 նը ունի . վասն զի իւր մէջը գաղտուկ կերպով
 գրեթէ աշխարհիս բոլոր մահաբեր մոլութիւննե-
 րը կը պարունակէ , ինչպէս . նախ՝ ծուխ մըն է
 նոյնպէս ալ տիեզերքիս բոլոր բաները : Արկրորդ՝
 խմողներուն զուարճութիւն կ'ընծայէ , ասանկ ալ
 աշխարհիս հաճութիւնները մարդս կը զուարճա-
 ցընեն : Արրորդ՝ արբեալ ու թեթևսօլիկ կ'ընէ
 մարդը , նոյնպէս ալ երկրիս բոլոր ունայնութիւն-
 ները : Չորրորդ՝ խմողները ալ անկէ չեն կրնար
 բաժնուիլ . ասանկ ալ աշխարհիս հաճութեանցը
 մէջ մտնողները՝ վերջը զանոնք թողելու կը դժ-
 կամակին , ասանկով գերի կ'ըլլան անոնց » : Աւ
 դարձեալ՝ Ա . վնհափառութիւնը կը զուրցէր թէ
 « թէ որ սատանան ճաշի հրաւիրել ուզէր , պէտք
 էր երեք սկուտեղ ունենալ . առաջին խոզ մը .
 երկրորդ պաքալայի մը գլուխ ու մանանեխ . եր-
 րորդ մարսելու համար ալ ծխաքարչ մը » :

Օրուս քաշելը՝ նոր սկսած ատեն մեր նախնիք
 չափազանց կը գործածէին , ինչուան եկեղեցւոյ
 մէջ , որն որ Ղրպան ութերորդ Պապը բանադ-
 րանաց հրովարտակներ հանելով՝ (ինչպէս որ վե-
 րը ըսինք) ասանկ չի տեսնուած սովորութեան մը
 գործադիրներուն վրայ դժոխքին բոցերը թափել

կ'ըսպառնար : Ուիլեամ Պրիտըն անուն Անգլիացի մը համար կը պատմեն թէ ծխախոտ չունեցած ատենը զանգակին չուանները կը կտրէ ու կը խմէ եղեր :

Նյրֆորտշայրի մէջ աւանդութիւն մը կայ թէ , Վէմպըլ անուն յիմարին մէկը հերետիկոսութեան համար մահուան դատապարտուած գըլխատման տանելու ատեննին գերմարդկային բընութեան խիստ հանդարտութեամբ ու արիութեամբ ծխաքարչ կը խմէ եղեր . ուսկից նոյն քաղքին մէջ խօսք մը կայ թէ մէկ նիստի մէջ վերջին քաշուած ծխաքարչը Վէմպըլէ-ծխաքարչ կ'անուանեն :

Կ'ըսեն թէ՛ Մեծն Փրետերիկոս Ռոուսիոյ թագաւորը հանդերձիւ գրպանները անագով պատել կ'ուտար քթախոտ պահելու համար , ու ամեն օր ինչուան բերաննին կը լեցընէր :

Պօնէթըս կ'ըսէ . « Ռփիշկին մէկը առտուրնէ ինչուան երեկոյ ծուխ քաշելէն չի կշտանալով՝ սովորութիւն ըրեր էր գիշերները անկողնոյն վրայ մեղրամոմեր ու ծխաքարչներ կախելու . մահուանէն ետե գլուխը քննեցին տեսան որ ուղեղը խիստ չորցեր և ընկուղի մը չափ պղտիկցեր էր » :

Չինակիր մը՝ որ տղայութենէն՝ ի վեր անընդհատ ծուխ կը քաշէր , Վրանքիրս տեսաւ որ գըլխուն սկաւառակին մէջ մուրի համ ունեցող տեսակ մը թանձր նիւթ գոյացեր էր , որուն իսկա-

կան պատճառը ծխախոտը կուտային :

Սարգուն մէկը առտուանց անկողնէն ելած ատենէն ինչուան երեկոյ միշտ ծուխ կը քաշէր , քիչ ժամանակէն ամուսնուլթեան տենչ մը գալով վրան , մէկու մը հետ խօսք ըրաւ առնելու , բայց ծուխ քաշելը մեծ արգելք եղաւ , կնկան սիրտը դրաւելու համար յանձն առաւ օրը 15 ծխաքարչէն աւելի չի խմելու , ինչ օգուտ , իւր բոլոր աղաչանքները չի կրցան մեղմել կնկան անողորբելի սիրտը :

Ատամ Վլարք բժիշկը կ'ըսէ թէ «Վրթախոտի սովորական գործածութիւնը ուղեղը կը չորցընէ , մարմինը կը տկարացընէ , յիշողութիւնը կը փթացընէ , ու աւելի հոտառութեան փափուկ զգացողութիւնը կը մնասէ . կաթուած , պալար¹ , ծիւրական ախտ , շրթանց վրայ վէրքեր և ուրիշ բազմաթիւ ախտեր յառաջ կը բերէ » :

Պ . Վրթիս կ'ըսէ , «Օխախոտի չափէ դուրս գործածութիւնը ո՛ր և իցէ կերպով որ ըլլայ արիւնը կը տաքցընէ , մարսողութեան դժուարութիւն կուտայ , հեղուկները կ'ապականէ , ու ջղերը կը թուլցընէ : Ըիւանդներէս մէկը՝ որ իր օրական խմած «կարնեբու» շատութեանը վրայ կը պարծէր , սկսաւ միշտ թուք ու լորձունք դուրս տալ . թէ որ բոլորովին չ'կտրուէր , անշուշտ կեանքին կարճնալուն պատճառ պիտի ըլլար : Վրթախոտը՝ կաթ-

¹ ՏՃ , գապարճընէ :

ուածոտ , խուլ և ուրիշ գլխու ախտ ունեցող մարդիկներուն , ինչուան հիւժական ախտին շատ փնասակար է . և մանաւանդ անոնց , որոնք որ ներքին ախտեր ունին ու արին կը թքենն : Այլ երջապէս վտանգաւոր ու աղտեղի սովորութիւն մըն է . հոտոտելեաց գործարանները կը փնասէ շունչը կը հոտեցընէ , աչաց խոնաւութիւնը վանելով տեսութենէ կը զըկէ , շնչառութեան դժուարութիւն կուտայ , լսելու գործարանները կը խանգարէ , ախորժակէ կը ձգէ , ու երբոր առատօրէն խմուելու ըլլայ մարսողութեան գործարաններուն ալ փնաս կը հասցընէ : Ուրիշ մատենագիր մ'ալ քթախոտը բժշկապէս քննելով կ'ըսէ . « Բթախոտը քթին փափուկ թաղանթը կը գըրգըռէ , մտաւորական ղօրութեան կը ներգործէ , քիթը յորդ պարպել տալով մէջի նուրբ թաղանթը կը թուլցընէ ու կը մաշեցընէ , ունեղերուն մէջ թանձր արեան պողիպող¹ մը կը գոյացընէ , որ ինչուան գլխուն մէջ ալ կը տարածուի : Բանի որ քիթը գոցուի , ու ազատ շնչառութիւն թիւնը արդիւուի , քթախոտ խմողը միայն բերնէն շունչ կ'առնու կուտայ , ու կ'ըստիպուի բերանը միշտ կէս մը բաց թողլով ստէպ ստէպ շնչառութիւն ընել , այն ալ մեծ դժուարութեամբ » :

Պ . Տակորոս անուն մէկը կ'ըսէ թէ « Անտեղի խօսք մը չէ ըսելը , թէ երիտասարդներուն

¹ ՏՃ . Ընկալութի : Անդ , փօլեկէ » :

ըրթունքին մէջ առած առաջին «կէսը» շատ հեղ մոլութեան ասպարէզին առաջին քայլը կը սեպուի : Աս երիտասարդ մը գիտէի , որ այս պժգալի սովորութիւնը ունենալով՝ թէ պատուոյն և թէ անձին կործանմանը պատճառ եղաւ : Ակամուտը չափաւոր էր , անգամ մը «կէսը» համար 20 ւերս Էմբլէմէն ծխախոտ ծախողի մը պարտական եղաւ , որն որ իւր տանը մէջ իրեն պէս մոլի երիտասարդաց հետ ընկերացած՝ իր այս չար կամքը տեղի կը տանէր : Այլմիտի մէջ ալ ուրիշ ծրխախոտ խմող մը «կէսը» համար օրը մէկ ւերս կը մտնէր , ծխելէն առաջ վարդախաղով սրսկելուն համար : Ալ կը ցաւիմ և միանգամայն կը դողամ այն երիտասարդներուն վրայ , երբոր կը տեսնեմ թէ ծխախոտին գերի եղած են , :

«Սխախոտի վրայօք լրագիրներու մէջ հրատարակուած գովեստներն կամ թատրոններու մէջ երգուած երգերն բոլորն ալ ծխաքարչէն ելած ծխին պէս ունայն են , ու անոնց համար դացած ստակը «կէսը» վաճառականները ու ծխախոտ ծախող խանութպանները կուտան , իրենց վաճառականութիւնը աւելի ընդարձակելու համար . ուստի մի հաւատար կամ մի խաբուիր անոնցմէ : Արթախոտի գործածութիւնը ծոյլ ու աղտեղի սովորութիւն մըն է , զոր բթամիտ անձինք ՚ի գործ կը դնեն ապուշ մտքերնին մաքրելու համար , որով խիստ զգուանք կը բերեն մօտակայներուն

որչափ ալ մաքրասէր ըլլան : Եւր աղնուական մը՝ որ երկար ժամանակէ 'ի վեր քթախոտ կը քաշէր , օր մը հարցուց բժշկին , « թէ արդեօք քթախոտը իրաւ հոտառութեան ջղերը կը վնասէ՞ , կամ թէ ուղեղին ալ վնաս ունի՞ » . բրժիշկը դառն խօսքով մը պատասխան տուաւ , « րստոյգ է , անոնք որ ուղեղ ունին երբէք չի պիտի խմեն » :

Եւսախոտի վրայօք սա հետեւեալ հենգնական ընտիր յօդուածը՝ մօտերս պարբերական տետրակի մը մէջ կարդացինք :

« Ձեռքը բաճկոնին մեծ գրպաններէն մէկուն մէջ խօթելով՝ ծանր ոսկի տուփ մը գուրս հանեց , ու անկէ քիչ մը սև փոշի առաւ ու լեցուց իր ձախակողմեան ատրճանակը , այսինքն ձախ ունզը , և սկսաւ մատուրներովը վեր մըղել : « Ի՞նչ է , ըսի , ատ անարգ փոշին , որ շատերը քթերնին կը խօթեն » . « Ես հիմա անոր ինչ ըլլալը քեզի կ'ըսեմ ըսաւ , դիմացինս » . — անիկայ մեր ընչադեղ ըսածն է , թունաւոր խոտի մը փոշին , որ ասանկով մեր տկարութեանցը շատ կ'օգնէ : Մարդս անգործ եղած ժամանակը կ'զբաղեցընէ . պարապ գլուխները պատասխան տալու նեղութենէն կ'ազատէ , քաղաքագէտներու , կեղծաւորներու և խաբերայներու ժամանակ կուտայ որ սուտ շինեն երբ պատրաստ չ'ունենան . յիմարներու իմաստուն երևոյթ մը կ'ընծայէ , և

ժողովուրդը կ'արգիլէ իրենց քթերնէն բռնելու , որ չ'ըլլայ թէ մատուրնին աղտեղի » : Ա'երևայ թէ այս յօդուածը գրողը քթախոտէն շատ զըզուած ըլլայ :

Տ . Թէրբըլիֆ քթախոտը կը յարգէ բժշկականնութեան օգտակար ըլլալուն համար , ինչու որ վայրկենական մտածմունք պէտք եղող խնդիր մը հարցուելու ըլլայ , բժիշկին ժամանակ կուտայ քարշ մը ընչադեղով անոր պատասխանը լաւ մը խորհելու և զուրցելու :

Թանկագին ժամանակին մէկ մեծ մասը ծխախոտի համար կը հովանայ . քթախոտ քաշողներն ալ այս պակասութենէս հեռի չ'են , ինչպէս որ Լօրտ Սթանհօփին յաջորդ մասնաւոր հաշուէն կ'երևայ : — Ա'ըսէ , 'Ն . վեհանձնութիւնը , « Իւրաքանչիւր անուանի , բազմաժամանակեայ ու անդարման քթախոտ քաշողը՝ չափաւոր հաշուով 10 վայրկենի մէջ քարշ մը կ'առնու . իւրաքանչիւր քարշ՝ քաշելով , քիթը մաքրելով և ուրիշ պատահական պարագաներով մէկտեղ մէկ ու կէս վայրկեան կը տևէ : Իթախոտ խմողին օրը 16 ժամ սեպելով իւրաքանչիւր 10էն մէկ ու կէս վայրկեանը ամեն մէկ օրէն 2 ժամ և 2¹/₂ վայրկեան կ'ելլէ , կամ 10էն օր մը : Իւրաքանչիւր 10էն մէկ օրը՝ մէկ տարուան մէջ 36 ու կէս օր կ'ընէ : Ըսկից յայտնի է թէ՛ թէ որ 40 տարի շարունակուելու ըլլայ՝ քթախոտ քաշողներուն 2

ամբողջ տարիները քթերնուն հաճութեանը՝ ու
 երկու անգամ աւելի քթերնին մաքրելու համար
 կը փճանայ : Վթախոտի , տուփերու և թաշ-
 կինակներու համար եղած ծախքը երկրորդական
 ճառի կարօտ է . ուսկից կ'երևայ թէ քթախոտը
 ոչ միայն մարդուս ժամանակը կը գրաւէ , այլ
 նաև եկամուտն ալ . ասանկ փուճ տեղ սպառած
 ժամանակն ու ստակը՝ թէ որ ըստ արժանւոյն
 հասարակութեան օգտին համար գործածուելու
 ըլլայ , անով ազգային պարտուց համար դրամա-
 գլուխ մը կրնայ հաւաքուիլ » :

Համպուրկի մէջ՝ ինչպէս որ վերը ըսինք ,
 150,000 ւերս «բեւելն» միայն գլանիկի համար օ-
 գոյն մէջ ոչնչացած է . Սիացեալ Նահանգաց
 մէջ ալ նոյնպէս 50 միլիօն : 1836ին Ղազղիոյ
 մէջ ծխախոտի համար եղած ծախքը 5,000,000
 ւերսի կը հասնի : Իսկ 1830ին Սեփին Ռիտա-
 նիոյ մէջ զանազան կերպերով ձեռակերտեալ ծը-
 խախոտին և ընչադեղին համար ծախքը 20,000,000
 «բեւելնի» չափ կ'երլէ :

Իսոյց մենք այժմ բանը մասնաւորի վերա-
 ծենք . դիցուք թէ մարդ մը իր քիթը յագեցը-
 նելու համար շաբաթը 6 փէնի կը վատնէ , տա-
 րին մէկ ւերս ու վեց փէնի կ'ընէ . իսկ թէ որ 40
 տարի շարունակուելու ըլլայ 52 ւերս կ'ընէ . ասի-
 կայ չափաւոր հաշիւ մըն է . մօտերս մարդուն
 մէկը ըսաւ թէ տարին 5 ւերս կը մսխէ եղեր .


Թէ որ հարցընենք թէ տուած ստակին տեղ ի՞նչ տուաւ . — ոչինչ :

Արդ , այս մէկ լեւոն ու վեց փէնիկ հեղինանակին գաղափարին համեմատ՝ թէ որ շահաւէտ գործքերու վաճառելու ըլլայ , մեծ օգուտներ կրնայ ընել : Անով տան պէտք եղած քանի մը կարասիք կամ հանդերձ կրնայ առնուիլ : Անով՝ ազնիւ գրքեր , լրագիր և կամ ուրիշ շրջաբերական տետրակներ կրնայ գնուիլ : Անով՝ երիտասարդ տղու մը անթիւ պարտուցը մէկ մասը վեճարելով՝ նպաստ մը կրնայ ըլլուիլ , որն որ տառապեալ ծեր ծնողացը խնամքին ու թւարկուածեանը կարօտ է , որոնք որ վշտալից տղու մը կարօտութիւնը լեցընելու համար պէտք էին երկար ապրելու : Արնայ այն ստակը ապահով տեղ մը դրուիլ , ճախորդութեան կամ հիւանդութեան ժամանակի դարման մը ըլլալու համար : Ա՛րջապէս , Ձի տարեկան մէկը՝ տարին միսած մէկ սփեւլինոն ու 6 փէնիկովը , ու անոր շահովը մէկ տեղ՝ 60 տարեկան եղած ժամանակը իրեն մնացած օրերը հանգստութեամբ ու երջանկութեամբ կրնայ անցունել :

Անոնք որ ծուխ կամ ընչադեղ կը քաշեն՝ թէ որ իրենց անձնական օգուտը կ'ուզեն նէ , պէտք է որ անոնցմէ հրաժարին . անոնք ոչ միայն առողջութեան մեծ վնաս կը բերեն , այլ նաև դրամոց ծանր հարկ մըն են : Աստ կարծեաց հե-

ղինակին , մարդուս միտքը կը խանգարին , և իւր բարեգոյն զգացմունքները եղծելով յանասնական կրից կ'ուզղեն , որ ատեն իրենց հաճոյքին համար փճացուցած ստակնին կամ ժամանակնին գովելի իրաց համար կրնար գործածուիլ , բարեգործութեան և մտաւոր զբօսանաց պարապելով , մարմնոյն Ֆիզիգական հանգստութիւնները ելելցընելով , ու անանկ կազմուածք մը անյնաս պահելով՝ որն որ « զարմանալի և զգուշութեամբ կազմակերպեալ է » , վասն զի այն որ կամակար զայն օրէնքները կը գրծէ , որոնցմով մարդուս կազմութիւնը կը կառավարուի , վերջը նոյն օրինաց զանցառութեան պատիժը 'ի հարկէ պիտի հատուցանէ :





L

